FASTBANK

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթուղթ
1.	Անձը հաստատող փաստաթուղթ
2.	Հանրային ծառայությունների համարանիշ[1] կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ
3.	• Երեխայի դեպքում՝ մինչև 16 տարեկան երեխայի համար՝ ծննդյան վկայական կամ առկայության դեպքում անձնագիր, 16-18 տարեկան երեխայի համար՝ անձնագիր, • Ծնողների կամ օրինական ներկայացուցիչների դեպքում՝ որդեգրողների անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ[1] կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ

2. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթուղթ
1.	Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի անհատ ձեռնարկատիրոջ վկայական (բոլոր ներդիրներով) կամ քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից
2.	Հարկ վճարողի հաշվառան համար (ՀՎՀՀ)
3.	Անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ
4.	Անհատ ձեռնարկատիրոջ հանրային ծառայությունների համարանիշ[1] կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ

3. ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթուղթ
1.	Կանոնադրություն վերջին խմբագրությամբ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայական (բոլոր ներդիրներով) կամ քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից
2.	Հարկ վճարողի հաշվառան համար (ՀՎՀՀ)
3.	Հիմանդրամի կամ հասարակական կազակերպության դեպքում հիմնադրման մասին որոշում (եթե հիմնադիրների մասին տեղեկությունները ներառված չեն կանոնադրությունում)
4.	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված տնօրենի (ղեկավարի) անձը հաստատող փաստաթուղթ
5.	Իրավաբանական անձանց մասնակիցների/բաժնետերերի/հիմնադիրների հաստատված ցանկ (եթե տեղեկատվությունը բացակայում է կանոնադրությունում կամ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից տրամադրված քաղվածքում)
6.	10 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերի, մասնակիցների, հիմանդրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի, հասարակական կազակերպության դեպքում՝ խորհրդի նախագահի և/կամ ժողովի մասնակիցների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը

4. ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթուղթ
1.	Կանոնադրություն (բնօրինակ կամ պատճենահանված՝ վավերացված ապոստիլով)
2.	Տվյալ երկրի գրանցող պետական մարմնի վկայական
3.	Տվյալ երկրի հարկային մարմնի կողմից տրված հարկ վճարողի հաշվառան համար (ՀՎՀՀ)՝ առկայության դեպքում
4.	Հիմնադիրների որոշման պատճեն՝ տնօրենի նշանակման վերաբերյալ
5.	Տնօրենի անձը հաստատող փաստաթուղթ
6.	Հիմանդրամի կամ հասարակական կազակերպության դեպքում հիմնադրման մասին որոշում (եթե հիմնադիրների մասին տեղեկությունները ներառված չեն կանոնադրությունում)
7.	Իրավաբանական անձանց մասնակիցների/բաժնետերերի/հիմնադիրների հաստատված ցանկ (եթե տեղեկատվությունը բացակայում է կանոնադրությունում)
8.	10 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերի, մասնակիցների, հիմանդրամ-ների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի, հասարակական կազակերպության դեպքում՝ խորհրդի նախագահի և/կամ ժողովի մասնակիցների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը
9.	Իրական շահառուի առկայության դեպքում՝ իրական շահառուի անձը հաստատող փաստա-թուղթ
10.	Ֆինանսական և/կամ աուդիտորական հաշվետվություններ (ըստ պահանջի)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Փաստաթուղթը պահանջվում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (ԷԿԵՆԳ) կամ Բանկի տվյալների բազայում տեղեկատվության բացակայության դեպքում: Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է ՀՀ քաղաքացու նույնականացման քարտում, օտարերկրյա քաղաքացու՝ ՀՀ կացության քարտում, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում, նախկինում տրված սոցիալական ապահովության քարտում, ինչպես նաև բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրվող տեղեկանքում:

2. Հաշիվների բացման համար հաճախորդի կողմից պետք է ներկայացվեն փաստաթղթերի բնօրինակները (օնլայն տիրույթում՝ էլեկտրոնային եղանակով), իսկ որոշ դեպքերում դրանք կարող են փոխարինվել պետական մարմինների շտեմարաններից ստացվող հարցումներով:

3. Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն գործողության ժամկետում կամ վերջին խմբագրմամբ:

4. Անհրաժեշտության դեպքում հաճախորդից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր:

5. Օտարերկրյա քաղաքացիների կամ ոչ ռեզիդենտների դեպքում ըստ անհրաժեշտության կարող է պահանջվել նաև անձնագրի նոտարական թարգմանությունը և անձնագրի բոլոր այն էջերի լուսապատճենը, որտեղ առկա են վիզաներ, մուտքի և ելքի դրոշմակնիքներ, և այլն:

6. Իրավաբանական անձանց համար իրական շահառուի բացահայտումը պարտադիր է (իրական շահառուն միշտ ֆիզիկական անձ է): Եթե իրավաբանական անձանց մասնակից(ներ)ը ևս հանդիսանում են իրավաբանական անձինք, ապա անհրաժեշտ է նույնականացնել վերջիններիս 10 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցներին մինչև իրական շահառուի բացահայտումը: